# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/5-3

ք.Երևան «01» «06» 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Դաննիկ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Մ. Օրմանջյանի (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 03.02.2020թ.. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/5-3 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.10 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի «Այլ պարտադիր պայմաններ» մասի 3-րդ պարբերությունն, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկները 01.06.2020թ.-ից անցել են սննդի հատկացման նոր համակարգի՝ պատրաստի սննդի ձեռքբերման ծառայության, ուստի անհրաժեշտություն է առաջացել նվազեցնել մատակարարվող սննդամթերքի քանակները և Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված սննդամթերքի այն քանակները, որոնց վերաբերյալ բաշխման ցուցակներ չեն ներկայացվել, ամբողջությամբ նվազեցնել, մասնավորապես՝

1) 30000 կգ «կարտոֆիլ» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 998 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 150698 (հարյուր հիսուն հազար վեց հարյուր իննսունութ) ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվազեցվող քանակների չափով վերացել է «կարտոֆիլ» ապրանքատեսակի գնման պահանջը, ուստի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պայմանագրի գինը՝ կազմում 4573302 (չորս միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր երկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 4-րդ չափաբաժնի աղյուսակը հաստատել նոր խմբագրությամբ, առանց տեխնիկական բնութագրի սյունակի (որը մնում է ամփոփոխ)՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/5-3 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և N1, N2 հավելվածները կազմված են 4 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է

մեկական օրինակ, համաձայնագրի N1 և N2 հավելվածները, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «ԴԱՆՆԻԿ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | ք.Երևան, Վարդաշեն 11փ. 4 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՎՀՀ 00478817 |
| Հ/Հ 900011175016 | «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02204739 | Հ/Հ 220098531605000 |
| ՔԿ ծառայություն՝ | Տնօրեն՝ |
| Ա.Ղազարյան | Մ. Օրմանջյան |
| ------------------------------ | ------------------------------ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
« 01 » « 06 » 2020թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/5-3 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 4 | 15311100/503 | կարտոֆիլ | գյուղմթերք | կգ | 151 | 4379302 | 29002 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 29002 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 01.06.2020թ. |

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության՝
Ա. Ղազարյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«ԴԱՆՆԻԿ» ՍՊԸ
ք.Երևան, Վարդաշեն 11փ. 4
ՀՎՀՀ 00478817
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220098531605000
Տնօրեն՝
Մ. Օրմանցյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
« 01 » « 06 » 2020 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/5-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 4 | 15311100/503 | կարտոֆիլ | - | 4379302 | 4379302 | 4379302 | 4379302 |
| 7 | 15331161/503 | սոխ, գլուխ | - | 194000 | 194000 | 194000 | 194000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 4573302 | | | | |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն
Ա. Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«ԴԱՆՆԻԿ» ՍՊԸ
ք.Երևան, Վարդաշեն 11փ. 4
ՀՎՀՀ 00478817
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220098531605000
Տնօրեն՝
Մ. Օրմանցյան

/ստորագրություն/
Կ.Տ.